

Նարեկ Ա. Մկրտչյան
Գևորգ Ա. Ճաղարյան

ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԳԵՊ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Ադրբեջանում 1980–ականների վերջերին–1990–ականների սկզբներին տեղի ունեցած հայկական ջարդերին*

Բանալի բառեր – «Նյու Յորք Թայմս», բաց նամակ, Լեոնային Ղարաբաղ, Սումգայիթ, մտավորականներ, հայկական ջարդեր, միջազգային հանրություն, Միշել Ֆուկո, Էդվարդ Սաիդ, ցեղասպանություն, Անտոնիո Գրամշի, անտարբերություն, «մարդկության շրջանակ»:

Մուտք

1980–ականների վերջերին Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը հանգեցրեց Սումգայիթի (27–29–ը փետրվարի, 1988 թ.), Կիրովաբադի (21–27–ը նոյեմբերի, 1988 թ.) և Բաքվի (12–19–ը հունվարի, 1990 թ.) հայկական ջարդերին, որոնց դաժանության ու վայրագության նախադեպը 1915 թ. Հայոց ցեղասպանությունն էր¹:

Չկամենալով խորամուխ լինել խնդրո առարկա իրադարձությունների ժամանակագրության և մանրամասների մեջ², որոնք քաջածանոթ են և բազմիցս վկայված՝ հողվածը նպատակ ունի ներկայացնել ու մեկնաբանել համաշխարհային հեղինակություն վայելող մի քանի տասնյակ գիտնականների կողմից միջազգային հանրությանն ուղղված այն բաց նամակը, որը տպագրվել է «**The New York Times**»-ի 1990 թ. հուլիսի 27–ի համարում:

Տեղեկատվական արդի տեխնոլոգիաների բացակայության պատճառով, ինչպես նաև ներքին ու արտաքին ձգնաժամային իրողությունների ազդե-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.04.2019:

1 1915 թ. Եղեռնի հետ զուգահեռի առումով հատկանշական էին տարբեր առիթներով ադրբեջանցիների կողմից բազմիցս հնչող հայտարարությունները՝ «Թուրքերը ճիշտ էին՝ սպանելով նրանց բոլորին [ինսա՛ հայերին]», տես **Kaufman Stuart J.**, *Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War* (Cornell Studies in Security Affairs), Ithaca and London, "Cornell University Press", 2001, p. 57: Մեծ Եղեռնի հետ քողարկված զուգահեռ է տարված նաև ներկայացվող բաց նամակում:

2 Սույն հարցերի համար տես հատկապես՝ **de Waal T.**, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War*, New York and London, "New York University Press", 360 p. և **Kaufman Stuart J.**, նշվ. աշխ. (հատկ. III գլուխը՝ Karabagh and the Fears of Minorities, pp. 49–83):

ցությանը՝ ամերիկյան օրաթերթում հրապարակված այս ուշագրավ նամակը գրեթե դուրս է մնացել 1990-ականների Հայաստանի քաղաքական և հանրային դիսկուրսից: Խոսքը Ֆրանսիայի Հելսինկյան համաձայնագրի դիտորդական հանձնախմբի և Փարիզում փիլիսոփայության միջազգային քննելիքի³ համատեղ նախաձեռնության մասին է, որի նպատակն էր միջազգային հանրության ուշադրությունը սևեռել Խորհրդային Ադրբեջանում մոլեգնող հայկական ջարդերի վրա, որոնք, ըստ նամակի հեղինակների, ցեղասպանության իրական սպառնալիք էին պարունակում: Սույն աշխատանքի շրջանակներում կներկայացնենք նամակի հայերեն թարգմանությունը, ինչպես նաև ամփոփ տեղեկություններ այն ստորագրած մտավորականների վերաբերյալ: Ընդամին, տեսական տարբեր հղացքների լույսի ներքո քննության կառնենք նաև ձգնաժամային իրադրություններում մտավորականի դերի, գործառույթների և ազդեցության փոխհարաբերությունները:

1. Ճգնաժամը և գիտական մտավորականության արձագանքը

Խորհրդային Ադրբեջանի հակահայկական քաղաքականությանն առնչվող հարցերը հարկավ դուրս էին «**The New York Times**»-ի 1990 թ. հուլիսի 27-ի համարում հրապարակված նամակը ստորագրած մտավորականների մեծ մասի գիտական հետաքրքրությունների շրջանակներից: Սակայն մասնագիտական սահմանների խախտումը հոգուտ համընդհանուրի հույժ կարևոր է մտավորականի կայացման գործում. այստեղ է, որ ասպարեզ է գալիս ունիվերսալ կամ համամարդկային մտավորականը: Հավանաբար հենց այս տրամաբանությունն է դարձել ֆրանսիացի մտածող Միշել Ֆուկոյի՝ «համամարդկային (universal) մտավորականի» սահմանման մեկնակետը: Իսկ ինչպես է մտավորական-անհատը (բժիշկ, գրող, քաղաքագետ, փիլիսոփա, ճարտարապետ և այլք) համալրում «համամարդկային մտավորականների» շարքը: Համաձայն Ֆուկոյի՝ այդ անցումը տեղի է ունենում, երբ մտավորականը դառնում է համամարդկային բարոյական, տեսական և քաղաքական արժեքների կրողը, ճշմարտության և արդարության ուսուցիչը, յուրաքանչյուրի խիղճն ու գիտակցությունը⁴: Մտավորականների այս գործառույթի անհրաժեշտությունն առավել քան օրակարգային է դառնում ձգնաժամային իրադրության պարագայում:

Խորհրդային Միության փլուզման գործընթացը մի շարք էթնոքաղաքական և այլ ձգնաժամային իրավիճակներ հարուցեց, որոնց մարտահրավերներին պետք է առերեսվեին նախ՝ Խորհրդային Ադրբեջանի հայկական համայնքը, ապա՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ազգաբնակչությունը: Միջազգային հանրությանը հասցեագրված՝ հայկական ջարդերը դատապարտող բաց նամակը կարելի է համարել Մ. Ֆուկոյի տեսական ձևակերպումների գործնական դրսևորումը: Նամակը, որում զգոնության կոչ է արվում միջազգային հանրությանը՝ չեզոքացնելու հնարավոր նոր ցեղասպանության հեռանկարը, ընդգծում է այն ստորագրած մտավորականների՝ համամարդկային արժեքներ կրելու հանձնառությունը:

3 Stén Helsinki Treaty Watchdog Committee of France and Collège international de philosophie, Paris.

4 Stén Foucault M., Power/Knowledge: Selected Interviews and Other Writings, 1972-1977, New York, "Pantheon Books", 1980, էջ 126:

Բազմաթիվ սահմանումներ կան մտավորականի էության և գործառույթների վերաբերյալ: Էդվարդ Սաիդը, օրինակ, մտավորականի իր սահմանումը տալիս աչքի առջև է ունեցել, ըստ ամենայնի, մտավորականների հենց այս տեսակին: Եվ այսպես, ըստ Սաիդի՝ «[...] Մտավորականն այն անհատն է, որն օժտված է հանրության համար ուղերձ, հայեցակետ, դիրքորոշում, փիլիսոփայություն և կամ կարծիք ներկայացնելու, մարմնավորելու և արտահայտելու ունակությամբ: Եվ այս դերն առավելություն ունի և չի կարող խաղացվել առանց այն զգացումի, որ մտավորականը նա է, որի դերը հրապարակավ դժվարին հարցեր առաջադրելն է, համընդհանուր կարծիքին և կանոնին դիմակայելը (այլ ոչ դրանց ստեղծումը), լինելու մեկը, ով չի կարող հեշտությամբ **յուրայնացվել**⁵ կառավարությունների ու խոշոր ընկերությունների կողմից, և որի գոյության իմաստը բոլոր այն մարդկանց և խնդիրները ներկայացնելն է, որոնք պարբերաբար մոռացության են մատնվում և քողարկվում: Մտավորականը սա անում է ընդհանրական (universal) սկզբունքների հիմամբ, այն է՝ բոլոր մարդիկ իրավագոր են ազատության և արդարության վերաբերյալ վարքի պատշաճ չափորոշիչներ ակնկալելու աշխարհիկ իշխանություններից կամ պետություններից, և որ այս չափորոշիչների դիտավորյալ կամ չկանխամտածված խախտումները պետք է հավաստվեն և վճաբար հաղթահարվեն»⁶:

Արդ հարց է ծագում. արդյո՞ք միջազգային հանրությունն ուշադրության է առնում այն մտավորականի ուղերձը, որն անվանի փիլիսոփա կամ մեծանուն բժիշկ է, բայց խոսում է մի բանից, որի վերաբերյալ նրա գիտելիքները հեռու են մասնագիտական լինելուց: Այս առումով հարկ է ընդգծել, որ մտավորականի սաիդյան սահմանումը՝ «լինել խիզախ՝ ճշմարտությունն իշխանության երեսին ասելու», ինչպես նաև դառնալ «ձայնագուրկների ձայնափողը»⁷ ևս բավարար չէ: Սակայն կա մեկ այլ հանգամանք, որը թույլ է տալիս լսելի դարձնել մտավորականի ձայնն առ միջազգային հանրությունը: Ըստ Ֆ. Ռուանեի՝ կարևորը մտավորականի ով լինելն է, նրա հեղինակությունը և ոչ նրա զուտ մասնագիտական գիտելիքները⁸: Հարկավ այս ձևակերպումը ևս միանշանակ լինել չի կարող, քանի որ դեմ կառնենք հարակարծության (paradox), եթե առաջնորդվենք, օրինակ, ճանաչելիության և հեղինակության ցուցիչով: Զորօրինակ՝ քանի՞ վայրկյան կդիմանա մտավորականի ով լինելու վերաբերյալ Ռուանեի հայեցակետը, եթե համադրենք մի կողմից՝ հայկական ջարդերը դատապարտող մտավորականներից միայն Յուրգեն Հաբերմասի, Ժակ Դերիդայի, Ժան-Ֆրանսուա Լիոտարի, Էմանուել Լեվինասի և Հանս-Գեորգ Գադամերի միջազգային հեղինակությունը, իսկ մյուս կողմից՝ միջազգային հանրության անտարբերությունը, ինչն ի վերջո հանգեցրեց արյունալի պատերազմի: Անշուշտ, նշված անհատները միանգամայն համապատասխանում էին Մ. Ֆուկոյի՝ համամարդկային մտավորականի, է. Սաիդի՝ ճշմարտությունը բարձրաձայնելու խիզախության, ինչպես

5 Ընդգծումը մերն է: Բնագրում՝ «co-opted», որը նպատակահարմար ենք գտել տվյալ դեպքում թարգմանել իբրև «յուրայնացնել»:

6 Said E. W., Representations of the Intellectual, The 1993 Reith Lectures, New York, "Vintage Books", pp. 11-12.

7 Collini S., Absent Minds: Intellectuals in Britain, New York, "Oxford University Press Inc.", 2006, p. 428.

8 Տե՛ս Ruane F. P., Public Intellectuals in Times of Crisis: The Role of Academia, Reflections on Crisis: The Role of the Public Intellectual, ed. by Corcoran M. P. and Lalor K., Dublin, "Royal Irish Academy", 2012, էջ 44:

նաև Ֆ. Ռուանդի՝ մտավորականի հեղինակության սահմանումներին: Հաջորդ հարակարծությունը, բախվում ենք «գորեղ մտավորականների»⁸ անգորությանը: Այդուհանդերձ, այս ամենի հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ այդ մտավորականները չեն ուրացել համամարդկային լինելու իրենց հանձնառությունը, անտարբեր չեն մնացել ուրիշի ցավին և անգամ ավելին՝ փորձել են կանխել մարդկության պատմության սուկալի երևույթներից մեկի՝ ցեղասպանության հեռանկարը: Սա, ըստ Վազյալ Հավելի, մտավորականի կարևոր գործառնություններից մեկն է, որը Կասանդրայի պես պետք է կանխատեսի վերահաս տարբեր սպառնալիքներ, սարսափներ և աղետներ⁹:

Մտավորականի համամարդկային արժեքանությունը հույժ կարևոր է ձգնաժամային մարտահրավերների հաղթահարման տեսանկյունից: Դա իրագործելի է, եթե հնարավոր լինի հաղթահարել անտարբերությունը: Ըստ էության, նամակը ստորագրած մտավորականների կոչը՝ ապահովել հայերի պաշտպանությունն ու անվտանգությունը Սոււմգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Լեռնային Ղարաբաղում, ԽՍՀՄ իշխանություններից և միջազգային հանրությունից անտարբերությունը հաղթահարելու պահանջ էր: Ադրբեջանական ուժերի կողմից հայերի իրավունքների ոտնահարումն ու ԽՍՀՄ իշխանությունների անտարբերությունը Հոլոքոստի ժամանակ ապրած անգորության զգացումի հետ համեմատելով՝ մտավորականները փորձում էին կանխել մարդկության դեմ նոր ոճրի հնարավոր սցենարը:

Անշուշտ, մեծ է համամարդկային արժեքներ կրող մտավորականների դերը բնաջնջման սպառնալիքի ներքո հայտնված ժողովուրդներին կամ ազգերին միջազգային հանրության ուշադրության կիզակետում պահելու առումով: Սակայն եթե մարդկության դեմ ոճրագործությունները դատապարտող մտավորականների ձայնն այնքան լսելի և զորեղ լիներ կանխելու համար եղերական դեպքերը, ապա Հայոց ցեղասպանությունից հետո տեղի չէին ունենա հրեաների, իսկ հրեաներից հետո Ռուանդայի թույսիների և այլ ցեղասպանություններ: Ասել կուզի՝ այն դրույթը, թե ցեղասպանությունների ձանաչումն ու դատապարտումն անհրաժեշտ են նախևառաջ հետագա ցեղասպանությունների առաջն առնելու համար, կարծես խոցելի է:

Այս հարցերն այլ մոտեցմամբ է քննարկում 20-րդ դարի ականավոր մարքսիստ մտածողներից Անտոնիո Գրամշին, որը հանրույթի մեկուսության և անտարբերության հաղթահարումը տեսնում է վերջինիս՝ «մարդկության շրջանակում» ներառվելու միջոցով¹⁰: Հետաքրքրական է, որ Գրամշիի ելակետը 1915 թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ անտարբերության փաստն էր, որի մասին հանրաձայնելու նպատակով ընդամենը մեկ տարի անց՝ 1916 թ., թուրիսյան «Ժողովրդի ճիչը» թերթում նա հրատարակել էր իր «Հայաստան» հոդվածը¹¹:

Անզորության կանխազգացումը, որ ունեին 1990 թ. «Նյու Յորք Թայմս»-ում լույս տեսած նամակը ստորագրած մտավորականները, կարծես Գրամ-

9 Տե՛ս **Popescu D.**, Political Action in Václav Havel's Thought: The Responsibility of Resistance, Lanham, Maryland "Lexington Books", 2012, p. 83.

10 Տե՛ս **Մերջեան Ա. Հ., Հովհաննիսյան Ս. Խ., Մկրտչյան Ն. Ա.**, Գրամշիի մարդկության շրջանակը և Հայաստանը, Եր., «Փրինթինգտոն», 2016, էջ 44: Bilingual Edition: **Ara Merjian, Smbat Hovhannisyan, Narek Mkrtchyan**, Gramsci's Circle of Humanity and Armenia, Ye'r., "Printinfo", 2016, էջ 109:

11 Անդ., էջ. 19-22:

շին ապրած լինելը դեռևս 1916 թ. իր այդ հողվածը գրելիս: Առաջինում կարդում ենք՝ «[...] Չարագուշակ է, որ նացիստական համակենտրոնացման ճամբարներում հրեա ժողովրդի ցեղասպանությունից կես դար, իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից քառասուն տարի անց մենք նույն անգորությունն ենք վերապրում մարդու իրավունքների այսօրինակ զարհուրելի ոտնահարմանը դեմ առնելիս»¹²: Երկրորդում՝ «[...] Երբ լսեցինք, որ թուրքերը հարյուր հազարավոր հայերի ենթարկել են զանգվածային կոտորածների, զգացինք մարմնի նույն ծակող սուր ցավը, որը մենք զգում էինք ամեն անգամ, երբ ականատես էինք լինում խոշտանգված դժբախտ մարմինների, և որը ուժգնորեն զգացինք անմիջապես գերմանացիների Բելգիա ներխուժումից հետո»¹³:

Ըստ էության, երկուսի պարագայում էլ մտավորականությունը բարձրաձայնում է համամարդկային արժեքների ոտնահարման անթույլատրելիությունը: Սակայն, ցավոք սրտի, պետությունների աշխարհաքաղաքական շահերը կամ ամբողջատիրական վարչակարգերի անողոք քաղաքականությունը խլացնում են մտավորականության բողոքի ձայնն ու զգոնության կոչը: Ճնշված կամ ստորակա/ստորադրյալ (subaltern) հանրույթի տառապանքների հանդեպ անտարբերությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է մեկ այլ ուժ, և այդ ուժը տվյալ հանրույթի կողմից իր հնարավորությունների և ներուժի բացահայտումն ու նպատակային կիրառումն է: Այս առումով հետաքրքիր «դեղատոմս» է առաջարկում Գրամշին, որն իր «Հայաստան» հողվածում գրում է. «Միշտ էլ այդպես է: Որպեսզի իրադարձությունը հետաքրքրի մեզ, հուզի, դառնա մեր ներքին կյանքի մի մասը, անհրաժեշտ է, որ այն տեղի ունենա մեր շուրջ, մարդկանց մերձակայքում, որոնց մենք հաճախ տեսնում և լսում ենք, և որոնք գտնվում են մեր մարդկության շրջանակում: [...] Թուրքիային, որ կապված էր եվրոպական բոլոր ազգերի հետ, հնարավոր կլիներ հարկադրել դադարեցնելու այն ժողովրդի խոշտանգումները, որի բաղձանքն ավելին չէր, քան խաղաղությամբ ապրելը: Երբևէ չարվեց ոչինչ կամ գրեթե ոչինչ: [...] Հայերը պետք է ճանաչելի դարձնեն Հայաստանը, կենդանի դարձնեն նրանց մտքի մեջ, որոնք նրան անգիտանում են, նրա մասին ոչինչ չգիտեն և չեն համակրում նրան: Թուրիստներն ինչ-որ բան տեղի է ունենում. մի քանի ամիս է, ինչ հրատարակվում է «Հայաստան» կոչվող մի ամսագիր, որը լուրջ մտադրություններով և շնորհիվ բազում համագործակցությունների բարձրաձայնում է, թե ինչ է իրենից ներկայացնում հայ ժողովուրդը, ինչ է ուզում և ինչ է դառնալու»¹⁴:

Հարյուրամյա այս հողվածից հետո երբ կարդում ենք 1990 թ. «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակված նամակը, իտալացի մարքսիստի մտորումները մարգարեական են թվում: Գրամշին ցանկանում էր պաշտպանել ոչ միայն հայ ժողովրդի ապրելու իրավունքը, այլև կանխարգելել ապագայում մարդկության դեմ հնարավոր հանցանքները՝ հաղթահարելով միջազգային անտարբերությունը, որը նրա համոզմամբ հնարավոր է, եթե տվյալ հանրույթը ներառվում է «մարդկության շրջանակում»: Հանրույթի գոյությունը վտանգ-

12 Տե՛ս բաց նամակը ստորև:

13 Մերձեան Ա. Հ., Հովհաննիսյան Ս. Խ., Մկրտչյան Դ. Ա., նշվ. աշխ., էջ 20:

14 Ասդ., էջ 19, 22:

ված է այնքանով, որքանով այն օտարված, հեռացված է «մարդկության շրջանակից»¹⁵: Սոււմգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերը, ինչպես նաև Լեռնային Ղարաբադի շրջափակումը դատապարտող նամակը համամարդկային մտավորականների կողմից կարծես հայությանն ի շրջանս մարդկության վերադարձնելու ճիգ լինէր:

Ստորև ներկայացնում ենք համաշխարհային ճանաչում ունեցող մի քանի տասնյակ գիտնականների կողմից միջազգային հանրությանն ուղղված բաց նամակի բնագիրը:

An Open Letter to International Public Opinion on Anti-Armenian Pogroms in the Soviet Union

An era, which we all thought had ended, the era of pogroms, has resurfaced. Once again this year, the Armenian community of Azerbaijan has been the victim of atrocious and intolerable premeditated massacres.

As scholars, writers, scientists, political leaders and artists we wish, first of all, to express our profound indignation over such barbaric acts. Which we wanted to believe belonged to humanity's past.

We intend this statement as more than an after-the-fact condemnation. We want to alert international public opinion to the continuing danger that racism represents to the future of humanity. It forebodes ill that we are experiencing the same powerlessness when faced with such flagrant violations of human rights a half century after the genocide of the Jewish people in Nazi concentration camps and forty years after the Universal Declaration of Human Rights. It would be inexcusable if, because of our silence now, we contributed to the suffering of new victims.

The situation of Armenians in the Caucasus is, in fact, too serious for us to remain silent. There are moments when we must assume the moral obligation to assist a people in peril. Our sense of obligation leads us today to appeal to the international community and to public opinion.

More than two years ago, active persecution against Armenians began in Azerbaijan. The pogroms of Sumgait in February 1988 were followed by massacres in Kirovabad and Baku in November 1988. As recently as January 1990, the pogroms continued in Baku and other parts of Azerbaijan. The mere fact that these pogroms were repeated and the fact that they followed the same pattern lead us to think that these tragic events are no accidents or spontaneous outbursts.

Rather, we are compelled to recognize that the crimes against the Armenian minority have become consistent practice – if not consistent policy – in Soviet Azerbaijan. According to the late Andrei Sakharov (New York Times, November 26, 1988), these pogroms constitute “a real threat of extermination” to the indigenous Armenian community in Azerbaijan and in the autonomous region of Mountainous Karabagh, whose inhabitants are 80 percent Armenian.

Horror has no limits, especially when we remember that the threat is against the Armenian people, who in 1915 paid dearly for their right to be different in

¹⁵ Ասդ, էջ 70:

the Ottoman Empire. There, Armenians lost half their population to genocide, the worst consequence of racism. Furthermore, if the recent pogroms have revived nightmares of extermination not yet overcome, the current total blockade of Armenia and Mountainous Karabagh – imposed since August, 1989 – has created the prospect of yet another genocide. It is well known that all supplies imported into Mountainous Karabagh and 85 percent of those into Armenia pass through Azerbaijan, it would not be an exaggeration to maintain that such a blockade amounts to the strangulation of Armenia. In a land devastated by the earthquake of December 7, 1988, the blockade has paralyzed the economy and dealt a mortal blow to the reconstruction efforts.

It is our sincere hope that **perestroika** will succeed. But we also hope for the success of **glasnost** and **democratization**. We recognize that the passage from a totalitarian state to a rule of law cannot be achieved overnight. It is nonetheless necessary that in the process of transition, the government of the Soviet Union promote, legalize and institutionalize such critical forces for democracy as human rights, the principle of toleration, and democratic movements. There is no better defense and demonstration of democracy. At any rate, that is the only way to avoid the worst. In the case of a multinational state, the worst may mean threats to the right of a people or a minority to exist. It is during periods of transition and uncertainty that rights of peoples – today Armenians, tomorrow another people or minority – are threatened or denied. In this respect, the ease with which we see today the development in the USSR of racist movements, especially the anti-Semitic movement known as **Pamyat**, is for us cause for grave concern.

In the name of our duty of vigilance, we demand that Soviet authorities as well as the international community condemn unequivocally these anti-Armenian pogroms and that they denounce especially the racist ideology which has been used by the perpetrators of these crimes as justification.

We ask from the Soviet authorities and the international community that all necessary measures be taken immediately to ensure the protection and security of Armenians in the Caucasus and other parts of the Soviet Union. This can begin by bringing about a definitive lifting of the Azerbaijani blockade. It should be clear that the forceful deportation of Armenians is not the solution to the problem of Mountainous Karabagh which, in essence, is a problem of human rights.

The international community of states under the rule of law must prove the authenticity of its commitment to human rights in order to ensure that, due to indifference and silence bordering on complicity, another genocide does not occur.

2. Աշխարհահռչակ գիտնականների բաց նամակի թարգմանությունը

«Նյու Յորք Թայմս»
27 հուլիսի, 1990 թ.

Բաց նամակ առ միջազգային հանրության կարծիքը Խորհրդային Միությունում հակահայկական ջարդերի վերաբերյալ

Դարաշրջանը, որ մենք բոլորս ավարտված էինք համարում, ջարդերի դարաշրջանը վերստին երևան եկավ: Այս տարի Ադրբեջանի հայկական համայնքը դարձյալ կանխամտածված հրեշավոր և անհանդուրժելի կոտորածների գոհր դարձավ:

Իբրև գիտնականներ, գրողներ, քաղաքական առաջնորդներ և արվեստագետներ՝ մենք կամենում ենք ամենից առաջ մեր խորին վրդովմունքը հայտնել այսպիսի վայրագ գործողությունների առնչությամբ, որոնք մեր հանդամբ մարդկության անցյալին էին պատկանում:

Սույն հայտարարությունը մենք ավելին ենք համարում, քան հետին թվով դատապարտում: Մենք ուզում ենք նախազգուշացնել միջազգային հանրությանն այն շարունակական վտանգի մասին, որ ռասիզմը ներկայացնում է մարդկության ապագայի համար: Չարագուշակ է, որ նացիստական համակենտրոնացման ճամբարներում հրեա ժողովրդի ցեղասպանությունից կես դար, իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից քառասուն տարի անց մենք նույն անգորությունն ենք վերապրում մարդու իրավունքների այսօրինակ զարհուրելի ոտնահարմանը դեմ առնելիս: Աններելի կլինեք, որ մեր լռության պատճառով արդ նպաստեինք նոր զոհերի տառապանքներին:

Հայերի դրությունը Կովկասում հիրավի չափազանց լուրջ է մեր լռելու համար: Կան պահեր, երբ մենք պետք է բարոյական պարտավորություն ստանձնենք վտանգի մեջ հայտնված մարդկանց օգնելու համար: Մեր պարտքի զգացումն այսօր մեզ ստիպում է դիմել միջազգային հանրությանն ու հասարակական կարծիքին:

Ավելի քան երկու տարի առաջ սկսվեց հայերի ակտիվ հալածանքն Ադրբեջանում: 1988 թ. փետրվարի սուրճայիթյան ջարդերին հետևեցին Կիրովաբադի և Բաքվի կոտորածները 1988 թ. նոյեմբերին: Արդեն իսկ 1990 թ. հունվարին ջարդերը շարունակվեցին Բաքվում և Ադրբեջանի այլ մասերում: Ինքնին այն փաստը, որ այս ջարդերը կրկնվում էին և հետամուտ էին միևնույն գործելակերպին, մեզ ստիպում է մտածել, որ այս եղերական անցքերը պատահականություններ և կամ տարերային պոռթկումներ չէին:

Ընդհակառակը, մենք ստիպված ենք ընդունել, որ հայկական փոքրամասնության դեմ ռժիբները հետևողական գործելաձևի, եթե ոչ պաշտոնական քաղաքականության են վերածվել Խորհրդային Ադրբեջանում: Լուսահոգի Անդրեյ Սախարովի խոսքերով («Նյու Յորք Թայմս», 26 նոյեմբերի, 1988)՝ այս ջարդերը «բնաջնջման իրական սպառնալիք» են ստեղծում Ադրբեջանի տեղաբնիկ հայկական համայնքի և Լեռնային Ղարաբադի Ինքնավար Մարզի համար, որի բնակչության 80 տոկոսը հայեր են:

Սարսափը սահմաններ չի ձանաչում, հատկապես երբ հիշում ենք, որ

սպառնալիքը հայ ժողովրդի դեմ է, որը 1915 թ. թանկ վճարեց Օսմանյան կայսրությունում իր ինքնության իրավունքի համար: Հայության կեսն այնտեղ գոհ գնաց ցեղասպանությանը՝ ռասիզմի վատթարագույն հետևանքին: Ավելին, եթե վերջին ջարդերը կյանքի են վերակոչել տակավին չհաղթահարված բնաջնջման մղձավանջները, ապա Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի՝ 1989 թ. օգոստոսից մտցված ընթացիկ լիակատար շրջափակումը ևս մեկ ցեղասպանության հեռանկար է ստեղծել: Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղ ներկրվող ողջ պարենամթերքը և Հայաստան ներմուծվող 85 տոկոսն Ադրբեջանով է անցնում. չափազանցություն չի լինի պնդելը, որ այսպիսի շրջափակումը համարժեք է Հայաստանը խեղդամահ անելուն: 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից ավերակված երկրում շրջափակումը կաթվածահարել է տնտեսությունը և մահացու հարված հասցրել վերականգնման ջանքերին:

Մենք անկեղծ հույս ենք տածում, որ վերակառուցումը (perestroika) կհաջողի: Բայց մենք ապավինում ենք նաև հրապարակայնության (glasnost) և ժողովրդավարացման (democratization) հաջողությանը: Մենք գիտակցում ենք, որ ամբողջատիրական պետությունից անցումն օրենքի գերակայության մեկ գիշերում չի կարող ձեռք բերվել: Բայց և այնպես անհրաժեշտ է, որ անցման գործընթացում Խորհրդային Միության կառավարությունն առաջ մղի, հաստատութենականացնի և օրինականացնի ժողովրդավարության այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, հանդուրժողության սկզբունքը և ժողովրդավարական շարժումները: Չկա ժողովրդավարության առավել լավ պաշտպանություն և ապացույց: Համենայն դեպս, սա վատթարագույնից խուսափելու միակ եղանակն է: Բազմազգ պետության պարագայում վատթարագույնը կարող են նշանակել սպառնալիքները ժողովրդի կամ փոքրամասնության գոյության նկատմամբ: Հենց անցման և անորոշության ժամանակաշրջաններում է, որ ժողովուրդների, այսօր՝ հայերի, վաղը՝ մեկ այլ ժողովրդի կամ փոքրամասնության իրավունքները սպառնալիքի տակ են կամ մերժված: Այս առումով ռասիստական շարժումների ներկա անկաշկանդ աճը ԽՍՀՄ-ում, հատկապես «Պամյատ» անունով հայտնի հակահրեական շարժումը, լուրջ մտահոգության առիթ է մեզ համար:

Զգաստության մեր պարտքի անունից մենք պահանջում ենք, որ խորհրդային իշխանությունները, ինչպես և միջազգային հանրությունը աներկբայորեն դատապարտեն հակահայկական այս ջարդերը և հատկապես ռասիստական գաղափարախոսությունը, որն իբրև արդարացում է օգտագործվել այս ոճիրների մեղավորների կողմից:

Մենք խնդրում ենք խորհրդային իշխանություններին և միջազգային հանրությանը, որ իսկույններ ձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ երաշխավորելու հայերի պաշտպանությունն ու անվտանգությունը Կովկասում և Խորհրդային Միության այլ մասերում: Սա կարող է սկսվել ադրբեջանական շրջափակման վերջնական վերացմամբ: Պետք է պարզ լինի, որ հայերի բռնի տեղահանությունը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծում չէ, որն ըստ էության մարդու իրավունքների հիմնախնդիր է:

Պետությունների միջազգային հանրությունն իրավունքի գերակայության

հիմամբ պետք է ապացուցի մարդու իրավունքներին իր հավատարմության իսկությունը՝ նպատակավ այն երաշխիքի, որ մեղսակցությանն սահմանակցող անտարբերության և լռության պատճառով մեկ այլ ցեղասպանություն տեղի չի ունենա:

3. Բաց նամակը ստորագրած գիտնականների ցանկը

Որևէ կերպ չնստնացնելով մի քանի տասնյակ մտավորականներից և ոչ ոքի դերն ու նշանակությունը (ինչպես նաև ելնելով նպատակահարմարությունից)՝ ստորև հակիրճ տեղեկություններ ենք տալիս նրանցից առավել երևելիների վերաբերյալ և ներկայացնում մյուսների ամբողջական ցանկը:

Հանս-Գեորգ Գադամեր (Hans-Georg Gadamer, 1900–2002) – մայրցամաքային ավանդույթի (Continental tradition) գերմանացի փիլիսոփա, 20-րդ դարի 2-րդ կեսի ականավոր մտածողներից, ով ամենից առաջ հայտնի է որպես «փիլիսոփայական մեկնարկետի» հիմնադիր: Գլխավոր աշխատությունն է՝ «Ճշմարտություն և մեթոդ» (**Wahrheit und Methode**, 1960):

Էմմանուել Լևինաս (Emmanuel Levinas, 1906–1995) – լիտվական ծագմամբ ֆրանսիացի փիլիսոփա, ով հայտնի է հրեական իմաստասիրությանը, էկզիստենցիալիզմին, բարոյագիտությանը, բներևութաբանությանն (ֆենոմենոլոգիա) ու գոյաբանությանը առնչվող իր աշխատություններով:

Իսայահ Բեռլին (Isaiah Berlin, 1909–1997) – հրեական ծագմամբ բրիտանացի ընկերաբան, փիլիսոփա, քաղաքական տեսաբան և գաղափարների պատմաբան (**historian of ideas**). «ինտելեկտուալ պատմության» հիմնադիրներից:

Պոլ Ռիկյոր (Jean Paul Gustave Ricoeur, 1913–2005) – ֆրանսիացի փիլիսոփա, ով առավել հայտնի է բներևութաբանական նկարագրության և մեկնարկետի (hermeneutics) համակցությամբ: Նրա մտածողությունն այն նույն ավանդույթի շրջանակներում էր, ինչ որ մյուս խոշոր հերմենևտաբանություններ Էդմունդ Հուսեռլինն ու Հանս-Գեորգ Գադամերինը:

Ժան-Ֆրանսուա Լիոտար (Jean-François Lyotard, 1924–1998) – ֆրանսիացի փիլիսոփա, ընկերաբան և գրականության տեսաբան: Հետազոտական հետաքրքրությունների շրջանակում էին միջգիտակարգային մի շարք թեմաներ՝ իմացաբանություն և հաղորդակցություն, ժամանակակից և հետարդի արվեստ, գրականություն և քննական տեսություն (critical theory), երաժշտություն, կինո, ժամանակ և հիշողություն, տարածություն, քաղաք և լանդշաֆտ, գեղագիտության և քաղաքականության փոխառնչություններ:

Կլոդ Լեֆոր (Claude Lefort, 1924–2010) – ֆրանսիացի քաղաքական փիլիսոփա և ակտիվիստ. հայտնի է իբրև ամբողջատիրության (totalitarianism) հետազոտող: Աշակերտել է Մորիս Մեռլո-Պոնտիին, որի հետմահու հրատարակություններն էլ հետագայում խմբագրել է:

Հիլարի Փաթնեմ (Hilary Putnam, 1926–2016) – ամերիկացի փիլիսոփա, տրամաբան, մաթեմատիկոս, 20-րդ դարի 2-րդ կեսի վերլուծական փիլիսոփայության խոշոր դեմքերից: Նշանակալի ներդրում է ունեցել մտքի, լեզվի, մաթեմատիկայի և գիտության փիլիսոփայության մեջ: Կյանքի վերջում Հարվարդի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր:

Փակ Դերիդա (Jacques Derrida, 1930–2004) – հրեական ծագմամբ ֆրանսիացի փիլիսոփա, որ առավել հայտնի է իբրև նշանագիտական վերլուծության ձևերից «դեկոնստրուկցիայի» հղացքի հեղինակ: Հետկառուցաբանական և հետարդի փիլիսոփայության երևելի դեմքերից:

Լուի Մարեն (Louis Marin, 1931–1992) – ֆրանսիացի փիլիսոփա, պատմաբան, նշանագետ և արվեստի քննադատ: Հետկառուցաբանական դպրոցի ներկայացուցիչ:

Ռիչարդ Ռորթի (Richard Rorty, 1931–2007) – ամերիկացի փիլիսոփա, ուշ վերլուծական ավանդույթի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից: Տարբեր շրջաններում Փրինսթոնի (փիլիսոփայության), Վիրջինիայի (հումանիտար գիտությունների) և Սթենֆորդի համալսարանների (համեմատական գրականության) պրոֆեսոր:

Ալբրեխտ Վելմեր (Albrecht Wellmer, 1933–2018) – գերմանացի փիլիսոփա: Աշխատություններ և հոդվածներ է հեղինակել գեղագիտության, իմացաբանության, լեզվի փիլիսոփայության, քննական տեսության, բարոյագիտության ու հետարդիության, ինչպես նաև Թ. Ադորնոյի, Յ. Հաբերմասի, Ռ. Ռորթիի և Լ. Վիտգենշտայնի վերաբերյալ:

Ֆիլիպ Լակու-Լաբարտ (Philippe Lacoue-Labarthe, 1940–2007) – ֆրանսիացի փիլիսոփա, գրաքննադատ, թարգմանիչ: Ազդվել է Մ. Հայդեգերից, Ժ. Դերիդայից, Ժ. Լականից, գերմանական ռոմանտիզմից, Պ. Ցելանից և Ժ. Գրանելից՝ վերջիններիս մասին էլ հեղինակելով իր երկերը: Ֆրանսերեն է թարգմանել Մ. Հայդեգերի, Պ. Ցելանի, Ֆ. Նիցցեի, Ֆ. Հյուդեռլինի և Վ. Բենյամինի գործերը:

Յուրգեն Հաբերմաս (Jürgen Habermas, ծնվ. 1929 թ.) – գերմանացի փիլիսոփա և ընկերաբան, Յ. Վ. Ֆոն Գյոթեի անվ. Մայնի Ֆրանկֆուրտի համալսարանի պրոֆեսոր (1964 թ-ից): 20-րդ դարի 2-րդ կեսի առավել ազդեցիկ քաղաքական ստածողներից, «հաղորդակցական գործողություն» (Communicative Action) հղացքի հեղինակը:

Չարլզ Մարգրեյվ Թեյլոր (Charles Margrave Taylor, ծնվ. 1931 թ.) – կանադացի փիլիսոփա, Մաքգիլի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր: Հեղինակել է մի շարք աշխատություններ քաղաքական և սոցիալական փիլիսոփայության, ինտելեկտուալ պատմության և փիլիսոփայության պատմության վերաբերյալ:

Վարդան Գրեգորյան (Vartan Gregorian, ծնվ. 1934 թ.) – կրթության

և մշակույթի ականավոր գործիչ, պատմագիտության և հումանիտար գիտությունների դոկտոր (Սթենֆորդի համալսարան, 1964 թ.), 1981-1989 թթ. Նյու Յորքի հանրային գրադարանի նախագահ, 1989-1997 թթ. Բրաունի համալսարանի նախագահ, 1997-ից «Քարնեգիի» հիմնադրամի նախագահ, մի շարք կազմակերպությունների պատվավոր անդամ, ավելի քան 70 համալսարանների և ակադեմիական հաստատությունների պատվավոր կոչումների է արժանացել:

Ռոնալդ Սյունի (Ronald Grigor Suny, ծնվ. 1940 թ.) – պատմագետ, Միչիգանի համալսարանի քաղաքական և ընկերային պատմության պրոֆեսոր, Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության և պատմագիտության պատվավոր պրոֆեսոր:

Ժան-Լյուկ Նանսի (Jean-Luc Nancy, ծնվ. 1940 թ.) – ֆրանսիացի փիլիսոփա, Ստրասբուրգի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, «Նիցշեի իտալական ընկերության» մրցանակի դափնեկիր (1990 թ.): Աշխատություններ է հեղինակել մի շարք մտածողների (Լական, Հեգել, Կանտ, Դեկարտ, Հայդեգեր) երկերի մասին: Մեծապես ազդվել է Ժ. Բատայից, Մ. Հայդեգերից, Ժ. Դերիդայից, Ֆ. Նիցշեից և Մ. Բլանշոյից:

Ժան-Պիեռ Մահե (Jean-Pierre Mahé, ծնվ. 1944 թ.) – ֆրանսիացի արևելագետ, բանասեր, հայագետ: Հայ միջնադարյան հեղինակներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ: Ֆրանսերեն է թարգմանել Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ը (1993):

Դեվիդ Աարոն (հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա),

Միմի Ալպերին (Նյու Յորք Հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա, Ազգային գործադիր խորհրդի նախագահ, Ամերիկայի հրեական կոմիտե),

Կառլ-Օտտո Ապել (փիլիսոփայություն, Ֆրանկֆուրտի համալսարան),

Մարկ Բալաքյան (Լոնդոն),

Վահե Բալեկջյան (միջազգային իրավունք, Գլազգոյի համալսարան),

Գաբրիել Բենաթար (իրավաբան, Փարիզ),

Մայքլ Բենեդիկտ (փիլիսոփայություն, Վիեննայի համալսարան),

Ռիչարդ Զ. Բեռնսթին (փիլիսոփայություն, Սոցիալական հետազոտությունների նոր դպրոց, Նյու Յորք),

Ժան Բորել (փիլիսոփայություն, Փարիզ VIII համալսարան),

Ռոզին Բոյաջյան (Փարիզ),

Պիեռ Էյջ Բրանդտ (փիլիսոփայություն, Օրիուսի համալսարան),
Ռայմոն Բրետոն (սոցիոլոգիա, Տորոնտոյի համալսարան),
Ստանիսլաս Բրետոն (փիլիսոփայություն, Կաթոլիկ ինստիտուտ, Փարիզ),
Ռուդոլֆ Բուրգեր (փիլիսոփայություն, Վիեննայի համալսարան),
Բեռնարդ Կառնոյս (փիլիսոփայություն, Մոնրեալի համալսարան),
Ուիլյամ Մ. Չեյս (Ուեսլեյան համալսարանի նախագահ),
Ժերար Շալյան (գրող, Փարիզ),
Ֆրենք Չալք (պատմություն, Կոնկորդիա համալսարան, Մոնրեալ),
Ռոջեր Ս. Քլարք (իրավունքի վաստակավոր պրոֆեսոր, Ռաթգերդի իրավունքի դպրոց, Մարդու իրավունքների միջազգային լիգայի փոխնախագահ),
Ջեյսոն Վ. Քլեյ («Մշակութային վերապրում» կազմակերպության տնօրեն, Քենթրիջ, Մասաչուսեթս),
Ֆիլիպ Կոնստանտինու (փիլիսոփայություն, Սեն-Ժանի Թագավորական ուսումնական քոլեջ),
Էսթեր Քուփերսմիթ (Վաշինգթոն ԿՇ, հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա),
Փիթեր Քաուի (հայագիտություն, Կոլումբիա համալսարան, Նյու Յորք),
Լուսիկ Դանիելյան (հաղորդակցության միջոցներ, Օլբանիում, Նյու Յորք նահանգի համալսարան),
Ջեք Դեվիդ (Նյու Յորք, հավատարմատար: Մարդու իրավունքների միջազգային լիգա),
Մասյո դը Դյուրան (միջնադարագիտություն, Մոնրեալի համալսարան),
Էլիզաբեթ դե Ֆոնտենե (փիլիսոփայություն, Էկոլ Նորմալ, Փարիզ),
Թերեզ Գուին-Գեկարի (հոգեբանություն, Մոնրեալի համալսարան),
Վիանի դ'Գարի (փիլիսոփայություն, Մոնրեալի համալսարան),
Միշել Դեգի (գրող, Փիլիսոփայության միջազգային քոլեջի տնօրեն),
Վենսան Դեկոմբ (ֆրանսիական գրականություն, Ջոն Հոփքինսի համալսարան),
Պատրիկ Տոնապետյան (Փարիզ),

Ստեֆան Դուայե (Փարիզ),

Թեոդոր Էլլենոֆ (Ամերիկայի հրեական կոմիտեի պատվավոր նախագահ, Նյու Յորք),

Պաոլո Ֆաբրի (Փարիզ),

Ջոնաթան Ֆ. Ֆենթոն (Սոցիալական հետազոտությունների նոր դպրոցի նախագահ),

Ֆերենց Ֆեհեր (փիլիսոփա, Սոցիալական հետազոտությունների նոր դպրոց),

Հելեն Ֆեյն (Ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի (Հարվարդ, Քեմբրիջ) գործադիր տնօրեն),

Լյուկ Ֆերի (փիլիսոփայություն, Ռենի համալսարան),

Ալեն Ֆինկելկրաուտ (փիլիսոփայություն, Փարիզ),

Հարի Ֆրանկֆուրտ (փիլիսոփայություն, Փրինսթոն),

Պատվարժան Դոնալդ Մ. Ֆրեյզեր (Մինեսոտալիսի քաղաքապետ, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Ֆելիս Դ. Գայեր (Մարդու իրավունքների միջազգային լիգայի գործադիր տնօրեն),

Ֆրանսուազա Գայար (ֆրանսիական գրականություն, Փարիզ, VIII համալսարան),

Ռալֆ Ջորդանո (գրող, Ֆրանկֆուրտ),

Մորիս Ժիրոդիա (գրող, Փարիզ),

Անդրե Գյուկսման (փիլիսոփայություն, Փարիզ),

Քրիստին Բյուսի-Գյուկսման (փիլիսոփայություն, Փիլիսոփայության միջազգային քոլեջ, Փարիզ),

Ազնեշ Հելեր (փիլիսոփայության պրոֆեսոր (Հաննա Արենդտի անվ. սոցիալական հետազոտությունների նոր դպրոց),

Բենջամին Լ. Հուբս (Գունավոր բնակչության առաջընթացի ազգային ընկերության գործադիր տնօրեն),

Իրվինգ Լ. Հորովից (սոցիոլոգիա, Ռաթգերդ),

Ռիչարդ Հովհաննիսյան (պատմություն, Լոս Անջելեսում Կալիֆոռնիայի համալսարան),

- Հենրի Հուտտենբախ** (պատմություն, Նյու Յորքի քաղաքային քոլեջ, ՆՅ),
- Կուրթ Ջոնասոն** (սոցիոլոգիա, Կոնկորդիա համալսարան, Մոնրեալ),
- Ֆլորենս Քանդել** (Նյու Յորք, հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա)
- Էրմին Կարագյոզ** (Փարիզ),
- Մաիմ Կատտան** (գրող, Մոնրեալ),
- Մարիվոն Կենդերժի** (Երաժշտության ֆակուլտետ, Մոնրեալի համալսարան),
- Ջոզեֆ Փ. Քենեդի II** (ԱՄՆ Ներկայացուցչների պալատ, Մասաչուսեթս շրջան),
- Կատրին Քեսեջյան** (իրավագետ, Փարիզ),
- Լեշեկ Կոլակովսկի** (փիլիսոփայություն, Բոլոր հոգիների քոլեջ, Օքսֆորդ),
- Կարպիս Քորթեան** (փիլիսոփայություն, Մոնրեալի համալսարան),
- Լեո Կուպեր** (Կալիֆորնիայի համալսարան, Լոս Անջելես),
- Կլոդ Լեվայկ** (փիլիսոփայություն, Մոնրեալի համալսարան) ,
- Ժիրայր Լիպարիտյան** (պատմաբան, «Զորյան» ինստիտուտի տնօրեն, Քենթրիջ, Մասաչուսեթս),
- Սիդնի Լիսկոֆսկի** (հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա),
- Ադրիան Լիթթելթոն** (պատմություն, Ջոն Հոփքինսի միջազգայնագիտության կենտրոն),
- Ռիչարդ Մասս** (գանձապահ, Մարդու իրավունքների միջազգային լիգա),
- Ժիրայր Մալխասյան** (Փարիզ),
- Միշել Մարիան** («Էսպրիտ», Փարիզ),
- Սյուզան Մասսի** (հավատարմատար, Մարդու իրավունքների միջազգային լիգա),
- Անոն Զ. Մայեր** (պատմաբան, Փրինսթոնի համալսարան),
- Ռոբերտ Մելոն** (քաղաքագիտություն, Պերդյու համալսարան),
- Յուրգեն Մերտին** (բժշկական ֆակուլտետ, Բեռնի համալսարան),

Գոնալդ Է. Միլեր (Կրոնի դպրոց, Հարավային Կալիֆոռնիայի համալսարան),

Ժուլիետ Մենս (գրող, Փարիզ),

Ժակ Միգել (իրավաբան, Փարիզ),

Ալան Մոնտեֆիորե (փիլիսոփայություն, Բալիոլ քոլեջ, Օքսֆորդ),

Ալեքսանդրա Մուտե (իրավաբան, Փարիզ),

Կլոդ Մուրաֆյան (գրող, Փարիզ),

Նորա Ներսեսյան (արվեստի պատմաբան, Բոսթոն),

Նենսի Զ. Ներսեսյան («Գիտության պատմություն» ծրագիր, Փրինսթոնի համալսարան),

Լեո Նեվաս (Մարդու իրավունքների միջազգային լիգայի նախագահ),

Մարկ Նշանյան (գրող, Փարիզ),

Ռաֆայել Պաստոր («News Corporation»-ի գործադիր փոխնախագահ, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Կլոդ Պիշե (փիլիսոփայություն, Մոնրեալի համալսարան),

Ժան Պյե (գրող, «Critique» հանդեսի խմբագիր, Փարիզ),

Ադամանտիա Պոլիս (պրոֆեսոր, Սոցիալական հետազոտությունների նոր դպրոց, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Լեքսի Բրոքուեյ Պոտամկին (Ֆիլադելֆիա, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Ժակ Պուլեն (փիլիսոփայություն, Փարիզ VIII համալսարան),

Հարոլդ Մ. Պրոշանսկի (Նյու Յորքի քաղաքային համալսարանի համալսարանական կենտրոնի և ասպիրանտուրայի դպրոցի նախագահ),

Ժերար Ռուլե (գերմանական գրականություն, Փարիզ IV համալսարան),

Միրիամ Ռեվոլ դ'Ալոնի (փիլիսոփայություն, Փարիզ I համալսարան),

Ֆրանսուա Ռուստան (հոգեվերլուծաբան, Փարիզ),

Վերա Բոդեն Սահեդփոր («Քրդական ծրագիր»/«Մշակութային վերապրում», Նյու Յորք),

Արմանդ Սարյան (Հելսինկյան կոմիտե, Ֆրանսիա),

Գուննար Սկոբերկ (փիլիսոփայություն, Բերգեն),

Ջերոմ Ջ. Շեստակ (Մարդու իրավունքների միջազգային լիգայի նախագահ),

Մարի-Լորենս Սիմոնե (Հելսինկյան կոմիտե, Ֆրանսիա),

Ռոջեր Սմիթ (կառավարում, Ուիլյամի և Մերիի քոլեջ, Վիրջինիա),

Ջիվան Թաբիբյան (քաղաքագիտություն, Լոս Անջելես),

Չարլզ Թեյլոր (փիլիսոփայություն և քաղաքագիտություն, Մաքգիլի համալսարան, Մոնրեալ),

Արտո Չաքմաքչյան (քանդակագործ, Մոնրեալ),

Իվ Տերնոն (բժիշկ/պատմաբան, Փարիզ),

Պատվարժան Ռոբերտ Գ. Տորիչելլի (կոնգրեսմեն, Նյու Ջերսի),

Լի Թրաուբ (Նյու Յորք, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Արիդ Ուտակեր (փիլիսոփայություն, Բերգեն),

Ուիլյամ վան դեն Հովել (Նյու Յորք, ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների նախկին մշտական ներկայացուցիչ, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Պիեռ Վեյլու (գրող, Փարիզ),

Պատրիս Վերմերեն (փիլիսոփայություն, Փիլիսոփայության միջազգային քոլեջ, Փարիզ),

Իգաբել Վոամյան (Հելսինկյան կոմիտե, Ֆրանսիա),

Սպերոս Վրիոնիս Կրտ. (պրոֆեսոր, Հելլենագիտության Օնասիս կենտրոն, Նյու Յորքի համալսարան),

Դեվիդ Վեյսբրոդտ (պրոֆեսոր, Մինեսոտայի համալսարանի իրավունքի դպրոց, Մարդու իրավունքների միջազգային լիգայի հավատարմատար),

Էլի Վիգել (գրող, Բոսթոն),

Ռեջինադ Է. Ջենիկ (պատմության պրոֆեսոր, Բերքլիում Կալիֆոռնիայի համալսարան),

Նարեկ Ա. Մկրտչյան – պատմաբան, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հետխորհրդային շրջանի պատմության և ազգաշինության տեսությունների ուսումնասիրությունը. թեմայի մասին ունի մի շարք հրատարակություններ հայաստանյան և միջազգային գրախոսվող հանդեսներում՝ orcid.org/0000-0003-3539-1649.

Գևորգ Ա. Ճաղարյան – պատմաբան, գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմության և արվեստի աղերսների, պատմության տեսության և փիլիսոփայության հիմնախնդիրներն ու 18-19-րդ դդ. բրիտանական քաղաքական իմաստասիրությունը: (Էլ.-փոստ՝ georgeworldhistory@gmail.com, <https://Ye'r..academia.edu/GeorgTshagharian>):

Summary

THE UNPRECEDENTED RESPOND OF WORLD KNOWN INTELLECTUALS

To Armenian Pogroms in Azerbaijan in late 1980s – early 1990s

Narek A. Mkrtchyan
Gevorg A. Tshagharyan

Key words – “The New York Times”, open letter, Nagorno Karabakh, Sumgait, universal intellectuals, Armenian pogroms, international community, Michel Foucault, Edward Said, genocide, Antonio Gramsci, indifference, “Circle of Humanity”.

In the last years of Soviet Union, the humanity faced several genocidal episodes like ethnic cleansings, destruction of cultural heritage of a nation, massacres, pogroms etc. More than seven decades after the Armenian Genocide, the Armenian nation was condemned to become a victim of ethnic cleansing and atrocities planned by the authorities of Soviet Azerbaijan. As a result of international indifference, the Armenian communities of Azerbaijan, particularly in Sumgait (February 27–29, 1988), Kirovabad (November 21–27, 1988) and Baku (January 12–19, 1990) have been subjected to atrocities. The aim of the paper is not the examination of these events, but the representation and study of an open letter signed by the internationally recognized intellectuals of the second half of the XX century. Being a joint initiative of **the Helsinki Treaty Watchdog Committee of France and intellectuals from the Collège International de Philosophie, Paris** the letter was published in “**The New York Times**” on July 27, 1990. Unfortunately, the letter had skipped the eyes of wider public in Armenia and abroad. The uniqueness of the letter can be measured by its content and the prominence of the signatories. It is more than obvious that the message of intellectuals was aimed at warning international community that necessary measures should be taken to prevent and save Armenians from another genocide. We translated the material from English into Armenian and provided it with introduction containing information about the signatories of the letter. Among them stand out Jurgen Habermas, Hans–Georg Gadamer, **Jacques Derrida, Jean–**

François Lyotard, Sir Isaiah Berlin, Emmanuel Levinas, Paul Ricoeur, Charles Taylor, Luc Ferry and others. On the other side, the letter is discussed within the context of different theoretical approaches in order to shed light on the nature, position and influence of intellectuals on the world of crises.

Резюме

БЕСПРЕЦЕДЕНТНЫЙ ОТКЛИК ВСЕМИРНО ИЗВЕСТНЫХ УЧЕНЫХ

На армянские погромы в Азербайджане в конце
1980-х – начале 1990-х годов

Нарек А. Мкртчян
Геворк А. Тшагарян

Ключевые слова – «Нью-Йорк Таймс», открытое письмо, Нагорный Карабах, Сумгаит, интеллектуалы, армянские погромы, международное сообщество, Мишель Фуко, Эдвард Саид, геноцид, Антонио Грамши, равнодушие, «круг человечности».

В последние годы существования Советского Союза человечество столкнулось с проявлениями актов геноцида, такими как этнические чистки, уничтожение культурного наследия нации, массовые убийства, погромы и т. д. Спустя более семидесяти лет со дня Геноцида армян армянский народ стал жертвой этнических чисток и зверств, запланированных властями Советского Азербайджана. В результате международного равнодушия армянские общины Азербайджана, особенно Сумгаита (с 27 по 29 февраля 1988 года), Кировабада (с 21 по 27 ноября 1988 года) и Баку (с 12 по 19 января 1990 года) подверглись зверствам.

Целью статьи является не изучение этих событий, а представление и изучение открытого письма, подписанного признанными интеллектуалами второй половины XX века. Будучи совместной инициативой Комитета по соблюдению Хельсинкских договоренностей Франции и ученых Международного философского колледжа в Париже, письмо было опубликовано в «Нью-Йорк Таймс» 27 июля 1990 года. К сожалению, оно не было известно широкой общественности в Армении и за рубежом. Уникальность письма может быть измерена его содержанием и авторитетом подписавшихся. Более чем очевидно, что послание интеллектуалов было направлено на предупреждение международного сообщества о необходимости принятия безотлагательных мер для предотвращения и спасения армян от геноцида. Мы перевели материал с английского на армянский и предоставили краткую информацию о подписавшихся. Среди них выделяются Юрген Хабермас, Ханс-Георг Гадамер, Жак Деррида, Жан-Франсуа Лиотар, сэр Исая Берлин,

Эммануэль Левинас, Поль Рикёр, Шарль Тейлор, Люк Ферри и другие. С другой стороны, письмо обсуждается в контексте различных теоретических подходов, чтобы пролить свет на природу, положение и влияние интеллектуалов на ход мировых событий.

REFERENCES

1. **Mergyan A. H., Hovhannisyan S. X., Mkrтч'yan N. A.,** Gramsh'ii Mardkut'yan sh'rganakə yev' Hayastanə, Ye'г., 2016, ej 44 (in Armenian).

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

ԺԱ (ԺԷ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 2 (66), ՎԱՐՐԻ-ԽՈՒՆԻ, 2019

ՎԼՎ ԽԱՄԱԽԱՅԻԿԱԿԱՆ ԽԱՆՐԵԼԱ